ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Սերգեյ Ստեփանյանից
Ք. Երևան, Սիսակյան 20,բն,22
Հեռ. 098-41-20-31
ՀՀ Թռչնաբույծների միություն
Պետական գրանցման համարը՝ 278.150.04365

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ ՀՀ Թռչնաբույծների միությունը ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության պետական գրանցման համարը
2. Կազմակերպության գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկանք
3. Կազմակերպության լիազորված անձ Սերգեյ Ստեփանյանի անձնագրի պատճենը
4. Հետաքրքրվածության նամակ
5. Հակիրճ վերլուծություն նախարարության գործունեության վերաբերյալ

Դիմող՝ Սերգեյ Ստեփանյան

<25> ապրիլի 2016թ.

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
02 05 2016թ.
Մուտք N Ստ/5101-16

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ

Դիմելով ՀՀ Գյուղատնտեսության նախարարին, կից հասարակական խորհրդի Կազմում ընդգրկվելու, ունեմ հետևյալ շարժառիթներն ու հետաքրքրվածությունը.

ա/ Հ.Խ-ի կազմավորման և գործունեության նման ձևաչափը կարծում եմ լինելու է օգտակար ու արդյունավետ

բ/ այսպիսի մոտեցումը նախապայման է քննարկումների ընթացքում անդամների ազատ ու անկաշկանդ մտքերի փոխանակմանը, բազմակարծիքության մթնոլորտում՝ սեփական դիրքորոշման արտահայտմանը

գ/ Հ.Խ. անդամները ի պաշտոնե չլինելով ենթականեր, զերծ կլինեն Հ.խ.Ն-ի, նախարարի կողմից հնարավոր ճնշումների ենթարկվելուց

դ/ տարբեր մասնագիտության անդամների գիտելիքների և մոտեցումների բազմաբնույթ, առանձին դեպքերում իրար հակասող լինելը, կարող են բացառել նույնատիպ, կոնկրետությունից զուրկ որոշումների ընդունումը

ե/ Թ. Մ. Խորհուրդը ներկայացնելով և երաշխավորելով իմ թեկնածությունը Հ.Խ.-ի կազմում նպատակ է հետապնդում առավել բազմակողմանի ներկայացնել հանրապետության թռչնաբույծների շահերն ու խնդիրները կառավարության առջև, ակտիվ մասնակցել բոլոր իրականացվող և սպասվող նոր ծրագրերին:՝ Հատկապես անասնապահության ու նրա համար խիստ կարևոր տոհմային գործի, անասնաբուժության, սեփական կերարտադրության բնագավառներում

զ/ իմ կուտակած փորձն ու գիտելիքները, հատկապես անասնապահության և ագրոբիզնեսի կազմակերպման բնագավառում ի նպաստ ծառայեցնելու ՀՀ Գյուղատնտեսությանը և գործնականորեն աջակցելու ՀՀ գյուղ. նախարարին ինտենսիվ գյուղատնտեսություն զարգացնելու գործում:

Հարգանքով՝ Ս,Ստեփանյան

ՀԱԿԻՐՃ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ /կարծիք/

Ես չէ, որ պետք է գնահատեմ ՀՀ ԳՆ իրականացվող քաղաքականությունը գյուղատնտեսության բնագավառում, սակայն ունեմ սեփական կարծիք և տեսակետ այդ ուղղությամբ: Առավել հակիրճ, բայց ընդհանրական, հետևյալն է: 1982թ. առ այսօր աշխատելով գյուղ մթերքների արտադրության բնագավառում, իսկ վերջին 19 տարիներին ղեկավարելով խոշոր տնտեսություններ, ականատես եմ եղել մեր ոլորտի բոլոր վարիվերումներին: Իր բոլոր բացթողումներով և թերացումներով հանդերձ անկախությունից հետո գյուղատնտեսության բնագավառում ամենաշոշափելի արդյունքներ արձանագրվել են վերջին 3-3.5 տարիներին: Անշուշտ այն պատահական չէ: Դրանում մեծ է նախարարության, նախարարի, նաև ապարատի պրոֆեսիոնալ, բանիմաց, համբերատար ու հետևողական շխատանքը: Գլխավորը միայն թվերը չեն, կարծում եմ հիմք է դրվել և ձևավորվել մի աշխատառճ, որը ենթադրում է կադրերի գնահատում և նշանակում հիմնականում օբյեկտիվ, պետականամետ չափորոշիչներով, որը գրավական է կայուն և արհեստավարժ աշխատակազմի ձևավորման: Կարծում եմ մեր բնագավառի ներուժը աննախադեպ մեծ է, ռեսուրսներն էլ անհամեմատ շատ: Լուրջ անելիքներ կան դաշտավարության, վերամշակման և հատկապես անասնապահության ոլորտներում: Ժամանակի պահանջին չի բավարարում շուկայավարումը, անորոշ կարգավիճակ կա ֆերմերների ու գյուղացիական տնտեսություններում, տրվող սուբսիդավորումը, կամ աջակցումջ կարող է առավել հասցեական լինել: Տարածքային մարմինները գնալով հեռանում են գյուղատնտեսական բիզնեսից: Նախարարությունը չունի լծակներ գյուղի կյանքին միջամտելու:

Հարգանքով՝ Ս. Ստեփանյան

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԹՌՉՆԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2014-2015թԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Թ.Մ. որպես իրավաբանական անձանց միություն, ղեկավարվելով հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքով և սեփական կանոնադրությամբ, նպատակ է հետապնդումնպաստել հանրապետությունում թռչնաբուծության զարգացման և ազգաբնակչությանը թռչնամթերքներով ինքնաբավմանը:Ապահովել միության անդամ-կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ պայմաններ, կորդինացնելով նրանց գործունեությունը, պաշտպանել նրանց գույքային և այլ շահերը, ներկայացնել նրանց հետաքրքրությունները պետական ատյաններում և հանրապետությունից դուրս տարբեր միջոցառումներում: Կազմակկերպում է ֆինանսական, իրավաբանական և մասնագիտական խորհրդատվություն, օգնում մասնագետների որոկավորման բարձրացման և արտադրությունը երիտասարդ կադրերով համալրմանը:

Ըստ ժամանակագրության, առավել կարևոր և խոշոր միջոցառումները հետևյալն են.

- 2014թ. փետրվարին Թ.Մ. նախապատրաստեց և Գյուղ. Նախարարության հետՀՀ կառավարության հաստատմանը ներկայացրեց «Հայաստանի հանրապետությունում թռչնաբուծության զարգացմանհայեցակարգը»:
- 2014թ. ակտիվ մասնակցեց ՀՀ անասնաբուժության մասին օրենքի ինչպես քննարկմանը այնպեսել ընդունմանը:
- 2014թ. Ապրիլի 21-23 կազմակերպվեց և անցկացվեց ԵԱՏՄ թռչնաբույծների հայաստանյան առաջին համաժողովը, որին հրավիրված էին և մասնակցեցին 7 երկրների թվով 17 ճանաչված ֆիրմաների պատվիրակություններ: Ստորոգրվեց փոխհամագործակցությանբաղմակողմ պայմանագիր:
- 2014թ. Ապրիլ-մայիս ամիսներին Սննդի անվտանգության պետական ծառայության և "Հետք" լրատվական-հետաքննչական–ի հետ կազմակերպվեց դիտարկումներ առևտրի ցանցում երրորդ երկրներից ներկրված սառեցված թռչնամսում հորմոնների թույլատրելի քանակությունը հայտնաբերելու ուղղությամբ:
- 2014թ. Մայիսի 15-ին Թուրքիայի Ստամբուլ քաղաքում կայացած Եվրասիական երկրների թռչնաբույծների համաժողովում հաստատվեց Հայաստանի անդամագրումը այդ կազմակերպությանը: , Հանձելով համապատասխան /թիվ 74/ սերտիֆիկատ:
- Անդամ-կազմակերպությունների առաջարկությամբ և խորհրդի վերլուծությունների արդյունքում գրավոր առաջարկություն կատարվեց ՀՀ կառավարությանը, բոլոր անասնապահների ու ոլորտի շահառուների կողմից, դեղամիջոցների հայաստանյան շուկայում տիրող բարձիթողի վիճակի մասին: Որի արդյունքում արտադրողները գտնվում են անշահավետ վիճակում ինչպես մենաշնորհային ընկերություններից, այնպես էլ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն փբը կողմից սահմանված աննախադեպ բարձր շուկայական գներից և գործող գնացուցակից: Արդյունքում՝ կառավարության համապատասխան որոշմամբ որոշոկի կարգավորում մտցվեց անասնաբուժական դեղորայքների շուկայում և ներկրվող դեղամիջոցների փորձանմուշառման գործընթացներում:
- 2014թ. մայիս-հունիս ամիսների միության և սպառողների ասոցիացիայի ուժերով ուսումնասիրվեց տեղական թռչնամսի շուկան և սպառողների կողմից արձանագրված դժգոհություններին հետևողական ընթացք տրվեց: Նմանատիպ միջոցառում անցկացվեց ՍԱՊԾ հետ համատեղ 2014թ. Օգոստոս- սեպտեմբերին

հավկիթի արտադրությամբ զբաղվող ընկերություններում ձվի պահպանման և պահեստավորման վիճակի ուսումնասիրման ուղղությամբ:

- 2014թ. հունիս , հուլիսն դեկտեմբեր ամիսներին Թ.Մ. երաշխավորությամբ և օգնությամբ թվով4 երիտասարդ մասնագետներ գործուղվեցին մասնակցելու վերապատրաստման կուրսերի, Սանպետերբուրգ/անասնաբույժներ/, Դոնի- Ռոստով/ կերակրման տեխնոլոգներ/, Ստավրոպոլ / սպանդ և վերամշակում/ծրագրերով:
- 2014թ. Սեպտեմբերի 4-7 Սոչի քաղաքում թռչնամսի արտադրության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման մասին անցկասված գիտա-պրակտիկ կոնֆերանսի մասնակցում և ելույթ:
- 2014թ. հոկտեմբեր- Պարսկական "Ռազմահանդ" և "Սադիբար" ֆիրմաների հրավերով հայ թռչնաբույծների պատվիրակության այց Թեհրան, կենդանի թռչնագլխաքանակի ներկրման տարեկան պայմանավորվածություններ ձեռք բերելու նպատակով:
- 2014թ. նոյեմբեր-Թ.Մ. խորհրդի ուժերով ձվի Եվրոպական տեխնիկական կանոնակարգի պահանջներից ելնելով «Ձվի հայկական նոր կանոնակարգի» մշակում և" Հայկական ստանդարտներ" փբը համատեղ նոր ՀUS –192-t-ի հաստատում:
- 2014թ. հոկտեմբերին նորաբաց, 2000տ արտադրողականությամբ Արմավիրի թռչնաֆաբրիկայի վերազինում , տեխնիկական կոնսուլտացիաների կազմակերպում անվճար, Թ.Մ. խորհրդի հրավերով: Բացումը՝ ՀՀ վարչապետի մասնակցությամբ:
- 2014թ. Ընթացքում ձվատու ֆաբրիկաներում միության փորձագետների և տեղի մասնագետների ուժերով ձվի արտադրության ողջ պրոցեսի համար ներտնտեսային նորմաների մշակում , երաշխավորության տեսքով դրանց տեղայնացում և հաստատում տնտեսություններում:
- Նախատոնական ձվի առևտրի/ նոր-տարի, սուրբ զատիկ/ անթերի կազմակերպման նպատակով ՀՀ նախագահին առընթեր վերահսկողակն մարմնի հետ համատեղ գործողությունների անցկացում:
- 2014թ. ներմիութենական միջոցառումներ
  ա/ ընդլայնվծ կազմով խորհրդի նիստ՝ հաղորդում 2013թ-ի կատարվածի և 2014թ ծրագրերի մասին: Կիսամյակի կտրվածքով կատարված աշխատանքների մասին հաղորդում: Յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ խորհրդի նիստում արտադրողների հետ թռչնամթերքների շուկայում տիրող իրավի քննարկում: 2015թ. փետրվարին Թ.Մ անդամ-կազմակերպությունների ներկայացուցիչների հերթական ժողով: Գործադիր մարմնի 2014թ.հաշվետվության քննարկում, 2015թ. բյուջեի նախագծի և սպասվելիք գործողությունների ծրագրերի ծնոթացում :
    - 2015թ. մարտին Կառավարություն ներկայացվեց վարչապետի հանձնարարությամբ մշակված " ՀՀ մսատու թռչնաբուծության զարգացման 2016-2025թթ. ռազմավարության ծրագիրը» որը քնարկվել է տարբեր հարթակներում, բայց դեռևս չի հաստատվել կառավարության կողմից:
    - 2015թ. Հունվարին մասնակցել ենք Մոսկվայում կայացած Եվրասիական միության թռչնաբույծների համաժողովին:
    - 2015թ. Մարտ-ապրիլ ամիսների Թ.Մ. նախաձեռնությամբ մսատու ուղղության ֆաբրիկաներում կատարված ուսումնասիրության արդյունքում հաստատվեցին արտադրական նորմատիվներ որոնք ներկայումս կիրառվում են արտադրության մեջ:

- Թ.Մ. առաջարկությամբ ապրիլի վերջին ՍԱՊԾ-ն կողմից կառանտին սահմանվեց Թուրքիայից ներկրվող թռչնամսի և կենդանի թռչունի նկատմամբ:
- 2014 և 2015թ. Գարնանը Թ.Մ. ի նախաձեռնությամբ բոլոր մարզերում որտեղ գործում են մասնագիտացված ֆաբրիկաներ, իրենց միջոցներով պատվաստվեցին տարածքի գյուղ. տնտեսությունների թռչնագլխաքանակները "կեղծ ժանտախտի" դեմ, չսպասելով պետ. միջամտությանը:
- 2015թ. Մայիսին գործարկվեց Սպիտակի բրոյլերային թ/ֆաբրիկան, որի վերակառուցմանն ու գործարկմանը էական օգնություն և օժանդակություն ցուցաբերեց Թ.Մ.-ը, նրա փորձագետները:
- Շարունակական դարձավ տարվա մեջ առնվազն երկու անգամ սպառողների ասոցիացիայի , ՍԱՊԾ հետ համատեղ ընկերություններում անցկացվող թռչնամթերքների արտադրության սան. վիճակի և անվտանգության ուղղությամբ ուսումնասիրությունները:
- 2014-15թթ. Միության գործադիր մարմինը մասնակցել է կառավարության ենթակառուցվածքներում և պետական այլ կառույցներում, այդ թվում ՏՄՊՊՀ, դատարաններում անդամ- կազմակերպությաններին վերաբերվող բոլոր կարևորագույն հարցերի քննարկմանը, ոլորտի առջև անընդհատ առաջացող առաջնահերթ խնդիրների բարձրաձայնմանը: Նշված ժամանակահատվածներում մ իքանի անգամ Թ.Մ. խնդրանքով ՀՀ Գյուղ. Նախարարի միջնորդությամբ և մասնակցությամբ հանդիպում և քնարկում է տեղի ունեցել ՀՀ վարչապետի մոտ, ոլորտին անհանգստացնող խնդիրների վերաբերյալ: Հատկապես ԱԱՀ- ի կիրառման, փոքր ու միջինին թռչնաբույծներին ստիպողական շրջանառու հարկման դաշտ չտանաելու, ներկրման ժամանակ առանձին ապրանքատեսակների մաքսազերծման և հարկման նկատմամբ արտոնություններ կիրառելու խնդրանքով:
- Պահպանվել և կատարվել են ներմիութենական ծրագրերը, կանոնադրական պահանջները, առավել շատ է օգտագործվում տեղեկատվության և հաշվետվության օնլայն եղանակը, մեծ խնդիրներ ունենք հատկապես թռչնամթերքի անվտանգության ապահովման հարցերում:
Միությունը,նրա խորհուրդը ձգտում են հնարավորին չափով օգնել ՀՀ Գյուղ. նախարարությանը ոլորտի հոգսերն ու խնդիրները օպերատիվ լուծելու և ճյուղի դինամիկ աճն ապահովելու:

Կազմվել է
Թ.Մ. խորհրդի կողմից
Նախագահ՝ Ս.Ստեփանյան

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՎԿԱՅԱԿԱՆ

03Ա 085638

իրավաբանական անձի պետական գրանցման

ԹՈՂՆԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՄՈՒԹՅՈՒՆ

(անվանումը)

գրանցված է պետական ռեգիստրի **Էրեբունու տ.բ.** կողմից
(ստորաբաժանման անվանումը)

Գրանցման համարը **278.150.04365**

Գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը **15.08.2009թ.**

Իրավաբանական անձի ծածկագիրը (կոդը) **39328159**

Իրավաբանական անձի տեսակը **- ոչ առևտրային -**

Գործունեության ժամկետը մինչև **-անժամկետ-**

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

„15" 08 200 9 թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ Տ/Բ ԷՐԵԲՈՒՆԻ ՏՈՀՄ
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ Տ/Բ ԷՐԵԲՈՒՆԻ ՏՈՀՄ
MINISTERSTVO JUSTICE RA. STATE REGISTER EREBUNI TO BRANCH

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 001

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական **03Ա 085638**

Անվանումը **ԹՈՂՆԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՄՈՒԹՅՈՒՆ**

Գտնվելու վայրը (հասցեն) **Երևան-0007, Արշակունյաց 9**

Այլ տեղեկություններ **Գործադիր մարմնի ղեկավար՝ գործադիր տնօրեն՝ Սերգեյ Ստեփանյան, անձ.ա/թ 0407923, տրված՝ 24.02.2005թ. 012-ի կողմից, բնակութ.վայրը՝ ք.Երևան, Սիսակյան 20շ.22բ.**

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

„15" 08 200 9 թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ Տ/Բ ԷՐԵԲՈՒՆԻ ՏՈՀՄ
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ Տ/Բ ԷՐԵԲՈՒՆԻ ՏՈՀՄ
MINISTERSTVO JUSTICE RA. STATE REGISTER EREBUNI TO BRANCH

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ